

796(062)

617-42



Հ. Մ. Ը. Մ.



ԵՐՈՒՍԱՂԵՄ

ԱՄՍՕՐԵԱՅ ԶՐՋԱԲԵՐԱԿԱՆ



Թիի 1

ՅՈՒՆՈՒԱՐ

1938

ՄԵՐ ՆՊԱՏԱԿԸ

Անդամներու մէջ աւելի հետաքրքրու-
րին եւ եռանդ արբնցնելու, ինչպէս
նաեւ Միութեան գործունէութեան եւ
առաջադրած ձեռնարկներուն շուրջ զա-
նոնք տեղեակ պահելու նպատակաւ, Մաս-
նահիղիս Վարչութիւնը որոշած է պատ-
րաստել — ամիսը անգամ մը — ներկա-
յացուած ձեռով քաղաքակազմներ, ո-
րոնք առ այժմ պիտի մասնացուին երկսիւն
չորս էջերով եւ պիտի բովանդակեն ընդ-
հանրապէս Հ. Մ. Ը. Մ.ի եւ մասնաւո-
րապէս Մասնահիղիս մարզական եւ
սկստական կեանքին վերաբերեալ գու-
րիւններ, վարչական հրահանգներ, թիւ-
րութիւններ, եւ նոյն իսկ ամփոփ յօդ-
ուածներ:

Սոյն ձեռնարկը օգտուած եւ փառաբ-
րելի նկատուած պարագային՝ ծրագրուած
է ընդարձակել «Շրջաբերական»-իս ծա-
ւալն ու բովանդակութիւնը:

ՄԵՐ ԿՈՍՏԵՆ

Ի՞՞՞ Է Հ. Մ. Ը. Մ. Ը

Իրենց ֆիզիքական եւ բա-
րոյական կրթութեան հետամը-
տող պիտակից պատանիներու
եւ երիտասարդներու եղբայրու-
թիւնն է Հ. Մ. Ը. Մ. Ը.:

Զուր պիտի ըլլար փորձել
այս սեղմ տողերու մէջ պար-

զել անոր հետապնդած նպա-
տակները, և թերեւս ալ աւե-
լորդ պիտի ըլլար այդպիսի ճիգ
մը, քանի որ Հ. Մ. Ը. Մ. Ը իր
յայտնաբերած գործերովն իսկ
արդէն կը ցոլացնէ զանոնք:


— Սատարել նորահաս հայ
սերունդներու ֆիզիքական եւ
բարոյական կրթութեան, ա-
նոնցմէ պատրաստելու համար
տիպար անհատներ՝ և հետեւ-
բար ընտիր հայ քաղաքացիներ
— անա՛ Միութեանս կոչումը:

Քսան տարիներու անցեալ
մը ունի Հ. Մ. Ը. Մ. Ը՝ իր ետին:
Ակներե է անոր ձեռք բերած
յաջողութիւնները՝ իր նպատակ-
ներուն իրագործման ճամբուն
վրայ: Եւ արդարեւ մարզական
ընդհանուր միութիւնն է ան այ-
սօր գաղթաշխարհի մէջ, և, իր
աւելի քան 360 մասնաճիւղե-
րովը և բազմահազար անդամ-
ներովը, կը ներկայացնէ գէպի
խտալը ձգտող հայ պատանինե-
րու և երիտասարդներու մե-
ծագոյն կ'նտանիքը:

718-54



Շուրջ երեք տարիներ առաջ Երուսաղէմի մէջ ևս հիմնուեցաւ այս համագաղութային եղբայրութեան մէկ մասնաճիւղը^(*), որուն վերապահուած է մեծ դեր կատարել քաղաքիս նորահաս սերունդներուն ֆիզիքական և բարոյական կրթութեան գործին մէջ:



ՄԱՐԶԱԿԱՆ

ՖՈՒԹՊՈՒԼ

Համաշխարհային ամենալայն ընդունելութեան արժանացած խաղն է ֆութպոլը, և յիրաւի՝ «խաղերու թագաւոր»ն է ան:

Մարզական պատերազմ մըն է ֆութպոլի խաղը, որուն մէջ յաղթող կը հանգիստանան առաւելաբար այն խումբերը՝ որոնք կ'իրազորեն հաւաքական խաղարկութիւնը, որ նախապայմանն է յաջողութեան և առանց որուն անիմաստ եւ խօշական պայքար մը կը դառնայ խաղը:

Լաւ խաղացող մը ըլլալու համար պէտք է ունենալ արագ վազք, ճկունութիւն և զօրաւոր մկաններ:

Ըմպելիներու գործածութիւնը և ծխելը կը հակազդեն պահանջուած յատկութիւններուն:

* * *

15 տարիներէ ի վեր Երուսաղէմի մէջ գոյութիւն ունեցած են ֆութպոլի զանազան

(*) Յաջորդով պիտի տանք ամբողջ տեղեկութիւններ Մասնաճիւղի կազմութեան և գործունեութեան շուրջ:

խումբեր, որոնցմէ մի քանիները նոյն խի կը քցած են դասուիլ քաղաքիս լաւ խումբերու կարգին, և սակայն մինչև Հ.Մ.Ը.Մ.ի կազմութիւնը պէտք եղած չափով չէ ընդհանրացած այս խաղը՝ ունենալով սահմանափակ հետեւորդներ միայն:

Առաջին խումբէն զատ՝ ներկայիս Հ.Մ.Ը.Մ.ը ունի՝ պահեստի, երկրորդ, երրորդ եւ չորրորդ (փոքրերէ կազմուած) խումբերը: Նորավարձ գաշափ ընծայած պատեհութեանց շքնորհիւ՝ կը յուսանք թէ հետը հետէ պիտի բազմանան այս խաղին հետեւողները, որոնք կանոնաւորապէս պիտի մարզուին նորընտիր Մարզական Յանձնախումբին հսկողութեան ներքեւ:

ՊԱՍԿԷԹՊՈՒԼ

Ֆութպոլէն յետոյ՝ խմբական խաղերու ամենէն ժողովրդականը կարելի է համարել Պասկէթպոլը:

Ինչպէս ֆութպոլի՝ նոյնպէս նաև Պասկէթպոլի մէջ պահանջուած յատկութիւններն են՝ արագաչարժութիւնը, ճկունութիւնը և մաքուր խաղարկութիւնը: Դժբախտաբար ներկայիս մեր տրամագրութեան տակ չունինք այս խաղին կանոնադրքին հայերէնը, սակայն ձեռնարկած ենք նոյնին անգլերէնէ թարգմանութեան, զորս պարբերաբար պիտի ներկայացնենք այս սիւնակներուն մէջ, որպէսզի ամէն հետեւող լաւապէս ծանօթանայ անոր օրէնքներուն:

Պասկէթպօլը գաղութիս հայկական շրջանակներուն մէջ մեծ ընդունելութիւն չէ գտած, ոչ իսկ Ղ. Մ. Ը. Մ. ի կազմութեան թուականէն մինչև այսօր. ասոր պատճառներէն գլխաւորագոյնն է անշուշտ սեփական դաշտի մը չգոյութիւնը:

Այսօր, սակայն, շնորհիւ մի քանի անդամներու մասնակի գոհողութեանց երբ կանգնուած է նաեւ Պասկէթպօլի խաղադաշտ մը, վստահ ենք թէ բաւական թիւով հետևողներ պիտի ունենանք այս հետաքրքիր խաղին, որոնք պիտի կատարեն կանոնաւոր փորձեր՝ Մարզական Յանձնախումբի հսկողութեան տակ:

վ.

Ա Թ Լ Է Թ Ի Զ Մ




Աթլէթիզմը (Ողիմպիական խաղեր) աշխարհի վրայ ծանօթ բոլոր մարզանքներու մայրն է. և հետևաբար՝ մնացեալ ամբողջ խաղերն ու մարզանքները անկէ ծնունդ առած և կամ անոր մէկ տարբերակն են:

Ամենէն աւելի անտեսուած մարզանքը եղած է ան ինչպէս գրեթէ ամէն տեղ՝ նոյնպէս նաև քաղաքիս հայկական շրջանակներուն մէջ, թէև մեր մէջ չեն պակասած այդ մարզին մէջ ընդունակ եղողներ:

Մարզական Յանձնախումբը իր հոգածութեան առարկայ պիտի ընէ մասնաւորապէս Աթլէթիզմի առաջացումը: Եթէ կարենանք պէտք եղած չափով

զարգացնել այդ մարզին մէջ մեր ունեցած ոյժերը, վստահ ենք թէ պիտի գրաւենք առաջաւոր տեղ մը՝ քաղաքիս մէջ սարքուելիք միջազգային ողիմպիական մրցումներուն մէջ:



վ.

ՍԿԱՌԻՏԱԿԱՆ

Մարզական ձեռնարկներու հետ անբաժան՝ Ղ. Մ. Ը. Մ. ը կ'իրագործէ նաև սկաուտական շարժումը, իբրև իր նպատակները արգասաւորող ամենագլխաւոր ազդակներէն մին:

Սկաուտութեան ներշնչած առաքինութիւններով է միայն որ կարելի կ'ըլլայ լաւապէս և ամրապէս շինել անհատի մը հոգին: Եւ երբ մէկը իւրացնէ և կեանքի վերածէ սկաուտական դաւանանքը՝ արդէն իսկ եղած կ'ըլլայ տիպար մարդ մը:



Մասնաճիւղիս կազմութեանէն հազիւ քանի մը ամիսներ յետոյ՝ ձեռնարկուեցաւ սկաուտական խումբի մը կազմութեան. և, աննպաստ բերումներու պատճառաւ շուրջ տարի մը տեղը նախապատրաստական աշխատանքներու աւարտումէն անմիջապէս յետոյ՝ 1936 Հոկտեմբեր 17ին կազմուեցաւ Մասնաճիւղիս սկաուտական խումբը — բաղկացած 21 հոգիէ — հին սկաուտ Կարապետ Մարտիրոսեանի ջանքերով, և վաւերացուելով տեղական կառավարութեանէն՝ և զաւերուսողէմի 30րդ և Պաղեստինի 52րդ խումբը:

1937 Մայիս 1ին հանդիսաւորապէս կատարուեցաւ Երզման արարողութիւնը, խուռն բազութեան ներկայութեան:

Ընդհանուր խմբապետ ընտրուեցաւ Կ. Մարտիրոսեան, իսկ օգնական խմբապետ՝ Լ. Երկաթեան: Խումբը բաժնուեցաւ երեք խմբակներու — Առիւծ, Վազր և Արծիւ — որոնցմէ առաջինին առաջնորդ ընտրուեցաւ Յ. Մահուհիէճեան, երկրորդինը՝ Գ. Հայրապետեան և երրորդինը՝ Յ. Ստեփանեան:

Անցնող ութ ամիսներու ընթացքին տեղի ունեցան 56 դաստիարակական կամ խմբական ժողովներ, 14 առաջնորդական նիստեր (Court of Honour) եւ երկու բացառիկ ժողովներ:

Կատարուեցան հինգ արշաւանքներ, թէեւ ոչ անթերի բայց խիստ կարգապահ ոգիով: Առաջնորդական ժողովը պատիժի ենթարկեց երեք սկաուտներ, որոնք վեհանձնօրէն կրեցին իրենց համար սահմանուած պատիժները:

Յունուարի վերջերը վեց սկաուտներ Ա. կարգի, իսկ մընացեալները Բ. կարգի քննութիւն պիտի տան:

Կան նաև երեք նորընծաներ, որոնց Երզման արարողութիւնը տեղի պիտի ունենայ Յունուար 6ին:

Լ.

Պատրաստեցէ՛ք
Հ. Մ. Ը. Մ. Ի ՕՐՈՒԱՆ
 փառաւո՛ր սօնակատարութեան
 ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ ԶՈՒՄԵԱԿԻՆ ԱՌԹԻՒ
 Կիրակի, 1938 Յունուար 30-ին
 Մանրամանութիւնները առանձին յայտարարութեամբ:

ՎԱՐՉԱԿԱՆ

Ներկայ Վարչութիւնը գործի շնորհիւ 1937 նոյեմբեր 1ին գումարուած Տարեկան Ընդհ. Ժողովէն յիտոյ՝ հետեւեալ կազմով.

Վահան Ղազարեան՝ Ա. Ատենապետ, Արամ Այվազեան՝ Բ. Ատենապետ, Լեւոն Քէչիշեան՝ Ատենադպիր, Կոմիտաս Գեղամեան՝ Գանձապահ և Կարապետ Յակոբեան՝ Խորհրդական:

Նոյն Ընդհ. Ժողովին մէջ Մարզական Ընդհանուր Խմբապետ ընտրուեցաւ Թորոս Տէր Թորոսեան, և Կարապետ Մարտիրոսեան վերընտրուեցաւ Սկաուտապետ:

Խրաքանչիւր խաղի համար առանձին առանձին յանձնախումբեր նշանակելու փոխարէն — ինչպէս եղած էր նախորդ չըջանին — նորընտիր Վարչութիւնը աւելի յարմար նկատեց մէկ ընդհանուր Մարզական Յանձնախումբի մը կազմութիւնը, որուն պիտի վստահուի մարդական բոլոր ձիւղերուն կիրառութիւնը: Ընտրուեցան հետեւեալները.

Թորոս Տէր Թորոսեան՝ մարզիչ Զուլթայի, Վահէ Ղազարեան՝ մարզիչ Պասէլթայի և Աթլէթիկայի, Հրայր Երկաթեան, Կարապետ Յակոբեան և Կոմիտաս Գեղամեաններ:

ԶԱՆԱԶԱՆՔ

Մասնաճիւղիս կազմութեան բուականէն (5 Մայիս 1935) մինչեւ այսօր՝ անդամներու ընդհանուր քիւր հասած է 157ի, որոնցմէ 42ր զանազան պատճառներով պակասած են (վախճանած, մեկնած, հրաժարեցուած, հրաժարած, վատուած): Ներկայիս գործօն անդամներու քիւն է 115:

Փութայի նորավարձ դաշտի հարթարման համար եղած մեծ ծախսերու հետեւանքով Միութեան նիւթակեր կարելիութիւնները սպառած ըլլալով, քանի մը սեղաններ ինքնաբար Նուրիէն ըրած էին՝ որպէսզի Փութայի խաղաղայրին կից եղող պարսպ գետինի վրայ շուտով կանգնուէր նաև Պասէթայի դաշտ մին այլ Ա յայտն, այլ նպատակին համար ինքնին բացած եղաւ Ֆոնս մը, որուն արդ ժամանակցած են 13 անդամներ՝ զոյսընկելով 5,890 մր:

Պիտի ուզելէնք որ մեր բոլոր սեղանները և համակիրները առաւել կամ նուազ չափերով բերին իրենց մասնակցութիւնը այս Ֆոնսին, սեղան մը եւս յայտարարելով իրենց զօնորթութեան ոչին:

Յարգով պիտի հրատարակենք նախատեսներու ընդհանուր ցանկը: